ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№__2762-Ա___ « 29 » մայիսի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, Հ. ԱԹՈՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.144 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶՈՀՐԱԲ ԲԱԲԿԵՆԻ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ, ԼԵՆԴՐՈՒՇ ԲԱԲԿԵՆԻ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Զոհրաբ Բաբկենի Զոհրաբյանի (ծնված 24.02.1980թ.) Լենդրուշ Բաբկենի Զոհրաբյանի (ծնված 10.02.1979թ.) դիմումները: Երևանի էրեբունի, Հ.Աթոյան փողոց հ.144 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 575.83քմ, որից 427.6քմ մակերեսով հողամասը Զոհրաբ Բաբկենի Զոհրաբյանին, Լենդրուշ Բաբկենի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման 24.12.2024թ. հ.24122024-01-0770 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 06.11.2025թ. հ.ԱՏ-06112025-01-1129, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 09.12.2025թ. հ.11896 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 23.01.2026թ. հ.20-Ել-Դ-112919-25 եզրակացությունը, համաձայն որի Երևանի էրեբունի, Հ.Աթոյան փողոց հ.144 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1.Վերականգնել Երևանի էրեբունի, Հ.Աթոյան փողոց հ.144 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Զոհրաբ Բաբկենի Զոհրաբյանի, Լենդրուշ Բաբկենի Զոհրաբյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 427.6քմ մակերեսով հողամասին կից 148.23քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 148.23քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, ք.Երևան էրեբունի, Հ.Աթոյան

փողոց h.144 հասցեում գտնվող 575.83քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246